




ԵՄ TEMPUS LaManche Վիրտուալ Ուղեղային Կենտրոն /Virtual Think Tank VTT/



ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ՝

- LaManche Վիրտուալ Ուղեղային Կենտրոնը /VTT/ ներկայացնում է նորարարական համացանցային սոցիալական համայնք, որը նախաձեռնում և խրախուսում է կայուն երկխոսություն LaManche գործընկեր երկրների շահառուների շրջանում՝ բարձրագույն կրթության բարեփոխումների վերաբերյալ:



ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1

LaManche VTT անդամները կամավոր կերպով ջանքեր և ժամանակ են տրամադրում՝ աջակցելու **LaManche** ծրագրում ներկայացված 5 գործընկեր երկրներում բարձրագույն կրթության ոլորտում փոփոխությունների նախաձեռնման և կառավարման ռազմավարություն մշակելու գործընթացին:

2

LaManche VTT անդամները տարածում են իրենց՝ բարձրագույն կրթության բարեփոխումների և համալսարանների կառավարման ոլորտում ունեցած փորձը՝ կապ հաստատելով **LaManche** գործընկեր հաստատությունների հետ:

3

LaManche VTT-ի շրջանակներում անդամները մասնակցում են առցանց քննարկումների, որնք անցկացվում են կայքի Խորհրդատվություն հատվածում՝ գործընկեր Հաստատությունների և **VTT** անդամների կողմից՝ հնարավորություն տալով անել մեկնաբանություններ և պահպանել հետադարձ կապ:



LaManche VTT

ԱՌԱՔԵԼՈՒԹՅՈՒՆԸ

VTT –ն տրամադրում է առցանց տիրույթ՝ խորհրդատվության, համագործակցության և բարձրագույն կրթության կառավարման ոլորտում փորձի փոխանակման համար: Վերջինիս հիմնական նպատակը փոփոխությունների կառավարման Ռազմավարություն մշակելն է:

ՏԵՍԼԱԿԱՆԸ

VTT անդամները կստեղծեն կայուն սոցիալական համայնք, որը կմիավորի ակադեմիական համայնքի ներկայացուցիչների, համալսարանների կառավարման և առաջնորդության բնագավառում տարբեր շահառուների ունեցած փորձը:

Առաքելությունը,
Տեսլականը,
Արժեքները



ԱՐԺԵՔՆԵՐԸ

Իրենց ողջ գործունեության ընթացքում VTT անդամները պետք է հետևեն գերազանցության, որակի և բարձր պրոֆեսիոնալիզմի դրսևորման սկզբունքներին՝ աշխատելով փոխադարձ վստահության մթնոլորտում:




VTT տիրույթում միմյանց հետ աշխատելու և համագործակցելու սկզբունքները

➤ Իրենց գործունեության ընթացքում VTT անդամները պետք է հանդես բերեն ազնվություն, արդարություն և քաղաքավարի վարքագիծ:

➤ Հարաբերությունները VTT տիրույթի ներսում պետք է հիմնված լինեն փոխադարձ հարգանքի և վստահության վրա:

➤ VTT անդամները պետք է համոզված լինեն, որ իրենց կատարած աշխատանքի որակը համապատասխանում է բարձր չափանիշների և բավարար է ծրագրի նպատակներն իրականացնելու համար:



ԾՐԱԳՐԻ
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ
ԼԻԱԿԱՏԱՐ
ԻՐԱԳՈՐԾՈՒՄ

VTT անդամները պետք է խուսափեն բախումներից, իսկ հակասությունների դեպքում ցուցաբերեն հանդուրժողականություն:



ԳՐԱՆՑՈՒՄ VTT ՏԻՐՈՒՅԹՈՒՄ

LaManche VTT-ում գրանցվելու համար անհրաժեշտ է ներկայացնել էլեկտրոնային հասցե և օգտատերի անվանում, որից հետո գաղտնաբառը կուղարկվի համապատասխան էլեկտրոնային հասցեին:



VTT ՏԻՐՈՒՅԹՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ ԿԱՐՈՂ ԵՆ՝

1. LaManche գործընկեր երկրներում բարձրագույն կրթության քաղաքականության մշակողները
2. Բուհերի պրոֆեսորադասախոսական և վարչական անձնակազմի ներկայացուցիչները
3. LaManche գործընկեր երկրների գործարար ներկայացուցիչները
4. Քաղաքացիական հասարակության ներկայացուցիչները
5. Ուսանողական ընկերությունների ներկայացուցիչները
6. Բարձրագույն կրթության ոլորտում գենդերային անհավասարության դեմ հադես եկող փաստաբանները:





ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՈՒՇԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

